

սար է այն բանին, թէ հնարաւոր է իմացութիւնը Ուրեմն «իմացութիւնը հնարաւոր է» ն կանխում է սկեպտիկի խորհրդածութեան իւրաքանչիւր քայլին: Այս տրամաբանական անհրաժեշտութեան փաստական արտայայտութիւնը գտնում ենք խիստ պարզ և աչքի զարկող Հիւմի մէջ, երբ նա ձգտում է օրինակ պատճառականութեան սկզբունքը ժխտել: Նա այսպէս է գատում. — երբ յաջորդական անսօցիացիայի ժամանակ a-ն և b-ն յաճախակի միացած են հանգէս գալիս, մեր մէջ սպասողութիւն է ծագում b-ի պատահելու ժամանակ a-ի առաջացման, ուրեմն a-ի և b-ի յաճախակի կրկնութիւնը՝ B-ն է սուբեկտիւ սպասողութեան՝ այսինքն պատճառականութեան գաղափարի՝ a-ի պատճառը. այսինքն B-ն A-ի պատճառն է: Պատճառականութեան գործադրութեամբ պատճառականութիւն է հերքում... Եւ սա պատահաբար աչքից խուսափող մի իրողութիւն չէ. այլ տրամաբանական անհրաժեշտութեամբ նրա ոգուց է բղխում: Իսկ եթէ սկեպտիկը ինքնահակասութիւնից խուսափելու համար պնդում և հաւատում է իմացութեան անհնարինութեան առանց հիմնաբանելու, դրանով նա ընկած կը լինի ամենագոռհիկ տեսակի դողմատիզմի մէջ, որովհետեւ նա յենում է չը պատճառաբանուած հաւատի վրայ:

Այսպիսով սկեպտիցիզմը իր երկու հնարաւոր ընթացքով ինքն իրեն հակասում և տրամաբանօրէն ոչնչացւում է:

(Նարունակելի)

Յ. Յ.



## ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Սովաւ խնդրում եմ բարեհաճիք զետեղելու հետեւեալը Ձեր պատուական ամսաթերթի մօտակայ համարներում:

Ամենափրկչեան վանքի Մատենադարանը կարող է ահա՛ նաւոր տեղ բռնել Ջուղայի հաստատութիւնների մէջ, և պատիւ բերել տեղւոյս հասարակութեանը:

Զուգայի Մատենադարանի այժմեան շինութիւնը, որը քաղկացած է 5 մեծ սենեակներից, կառուցուել է Կալիաթա-  
րնակ Զուգայեցի պ. Թադէոս Յարութիւնեանի ծախքով, ի յի-  
շատակ իւր հանգուցեալ հօրը, որը վարել էր անձնուիրո-  
թեամբ վանքի մատենադարի պաշտօնը, և հեղինակն է Նոր-Զու-  
գայի կրկնահատոր պատմութեանը: Նոր շէնքը զանազան դիւ-  
րութիւններ ընծայելով՝ յուսալի է, որ Պարսկ-Հնդկաստանի  
թեմում ապրող բարեպաշտ ազգայինները կը փութան ուղար-  
կել ամեն ճիւղի վերաբերեալ հին և նոր գրքեր, նաև ցանկալի  
է, որ Տաճկահայ և Ռուսահայ հեղինակները չզլանան իրանց  
երկասիրութիւններից ևս մասն հանել սոյն բարենպատակ հա-  
տատութեանը, և այդպիսով ստուարացնել գրքերի թիւը, որ  
այժմ մօտ 2,500 է:

Հայ ձեռագրերը թուով 598, նշանաւոր տեղ են բռ-  
նում, և մի քանիսը որոնք ընտիր մագաղաթի վրայ են գրած  
աչքի են ընկնում իրենց հնութեամբ վայելչագրութեամբ և  
զարդանկարներով: Ահա թէ ինչ է գրում David Fraser՝ անգ-  
լիացի ճանապարհորդը ի միջի այլոց և վերոյիշեալների մասին,  
Բօմբէյում հրատարակուող «Indian Jimes» նշանաւոր շաբա-  
թաթերթի մէջ, որտեղ տպագրուում են հետզհետէ Պարսկաս-  
տանում կատարած նրա ճանապարհորդութեան տպաւորու-  
թիւնները:

«Մայր եկեղեցին տեսնելուց յետոյ՝ հիւրընկալ քահանան  
ցոյց տուեց մեզ վանքում դանուող միւս հաստատութիւնները,  
որոնք են, դպրոցը, մատենադարանը և տպարանը: Վերջինն  
եռուն վիճակի մէջ էր, և զբաղուած հայերէն մը կը ծոտկան  
շաբաթաթերթի տպագրութեամբ: Դպրոցը ծանդեան ուձա-  
կուրդի պատճառով փակ էր, սակայն Մատենադարանում մի  
ամբողջ կէս ժամ հետաքրքրութեամբ նուիրեցի ինձ մի քանի  
հին մատենագիրների քննութեանը: Սրանցից մի քանիսը պատ-  
կանում էին վեցերորդ դարուն, և դարձեալ կային ուրիշ գրքեր,  
որոնք աւելի հնութիւն ունէին: Ինչքան որ կարողացայ դիտել՝  
գրանք բոլորը Սուրբ Գրքից զանազան հատուածներ էին, ձեռ-  
քով գրուած և գունագեղ զարդարուած: Զեռագիրներից մէ-  
կում նկարուած էր Ագամը քնած գրութեան մէջ, կողքերի ու-  
կորներից մէկը դուրս ցցուած, և ոսկորի ծայրին զետեղուած  
մի փոքրիկ եւտ: Մի ուրիշ նկարի մէջ վերոյիշեալ զոյգը ման  
էր գալիս մերկ՝ վայրենի անասունների մէջ: Ապա նկարուած  
էր արգիլեալ ծառը, որտեղ օձն ու խնձորը շքեղ կերպով  
երևան էին հանուած: Վերջ ի վերջոյ յանցաւոր զոյգը տես-  
նում է հեռանալիս Եդեմական դրախտից, ակներևաբար զար-

դարուած մեծ տերեւներով: Զարմանալի բան է, որ Զուղայի հայերի մասին զբաղւող բաղմաթիւ գրողներից ո՛չ մէկը յիշատակութիւն չի արել վերոյիշեալ գրքերի վերաբերմամբ, որոնք աներկբայ հին են և հնագիտական մեծ արժէք ունին»:

Անգլիերէն գրքերի թիւը հասնում է մօտաւորապէս 800-ի և պարունակում իւր մէջ XXXV հատորից բաղկացած «Encyclopædia Britannica» փառակազմ համագիտարանը, և աշխարհահռչակ պատմութիւններից կազմած XXV հատոր ընդհանուր ազգաց պատմութիւնը սկզբից մինչև 1907 թուականը: Ուշագրութեան արժանի են նաև Ռուսերէն լեզուով տպած 8 մեծահատոր Կովկասի պատմութիւնը, և մի քանի ուսումնական գրքեր Պարսկաստանին վերաբերեալ:

Ձեռագիրներից ամենահինը մի Աւետարան է, կաշեկազմ, երկատուն, մեծութիւնը 64×89 հրմ. երկաթագրով մագաղաթի վրայ գրած, 286 թերթից բաղկացած, կրում է հետևեալ յիշատակարանները:

- ա) Վերջին երեսում Ս. Յովհաննու աւետարանից յետոյ գրուած է. «Ի թուականութեանս Հայոց ՆՁԵ գրեցաւ Սուրբ Աւետարանս մատամբ Թորոս նուառ և տրուպ կրօնաւորի, արդ աղաչեմ զընթերցողոյ և զլսողոյ զիս զբաղմամեղս, և զծնողն իմ յիշեսցիք ի Տէր Աստուած, և Աստուած ձեզ ողորմեսցի»:
- բ) Մարկոսի աւետարանի վերջին երեսում՝ «զԹորոս զաւգնամեղս յիշեսցիք ի Տէր Աստուած»:
- գ) Աւետարանի առաջին երեսում յիշատակուած է ծերունի Տէր Մկրտչի՝ վերջին ստացողի անունը, առանց թուականի:

Երկրորդ ամենահինը դարձեալ Աւետարան է, կաշեկազմ, քամրակեայ թուղթ, երկաթագիր, երկու սիւնակով, մեծութիւնը 67×79 հրմ. ընդամենը 215 թերթ, ունի 3 խորաններ: Երևում է, որ ջրի մէջ մնացած է եղել: Աւետարանի վերջում գտնուած յիշատակարանը գրուած է բոլորագրով:

Յիշատակարանը.

«Փառք Հաւր ամենակալի և նախախնամողի. եւ որդւոյն միածնի և իրկողի զՏիեզերս: Եւ Հոգւոյն ճշմարտի և նորոգողի զարարածս ամէն: Արդ գրեցաւ ցանկալի Սուրբ Աւետարանս ի թուականութեանս Հայոց ՈԽ ձեռամբ քրիստոսոսիրի նուառտս կրաւնաւորի և անյարմար գրչի յանուն քաանայի Գորգոյ և իւր ծնողացն և եղբարցն փոխեցելոցն առ Քրիստոս Գրի-

դորոյ և սուրբ քահանային Առաքելիս որ ստացաւ զսա իւր կամուսոր յաւթարութեամբ և ալլ աստուածախօս պատուիրանս և զսուրբ Գրիգոր անուն Աստուծոյ և քաւարան ամենայն հաւատացելոց ի հետարիայ յիւր վաստակոց՝ զոր ինչ և ջանայր մարմնաւոր հոգւոյ տայր \* \* \* »:

Երրորդ հինգ ձեռագիրք. Աւետարան, կաշեկաղմ, երկասիւն, մեծութիւնը  $64 \times 82$  հրմ. զարդանկարներով, երկաթագիր ընտիր մագաղաթի վրայ գրած, 335 թերթից բաղկացած, ունի հետևեալ յիշատակարանները:

ա) վերջում՝ «Փառք սուրբ և սկզբնարար միշտ կենդանի և կենդանարար, միշտ բարի և բարեբար երրորդութեանն, մի աստուածութեանն, Հաւր, և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և յաւիտեանս յաւիտենից ամէն: Գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուիս Ուի: Որք լուսաւորիք ի սուրբ աւետարանէս, զմեղաւոր աշխատողս յիշեցէք ի Քրիստոս ի Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն:

բ) միջում՝ «Զգաստացողք մեծափառ և լուսաղարդ Աւետարանս զպատուական քահանայսն զԱստուածատուրն և զՔրիստոսատուրն և զԽաչատուրն և զԾնաւորսն իւրեանց յիշեցէք ի Քրիստոս Յիսուս աղաչեմք»:

գ) Քրիստոս Աստուած բարեխաւսութեամբ Մաւր և կենսաբեր աւետարանաւք թո քարոզութեամբ ընդ ամենայն չորեք և զամենայն տիեզերս, ողորմեմ՝ ստացողս սորա Քրիստոսաղարդ և պատուական քահանայիցս Քրիստոսատրին և Աստուածատրին և Խաչատրին և ամենաւրհնեալ ծնողաց իւրեանց և ամենայն ազգայնոցն մեծ և փոքու ի թո փառաւոր և ի միւսանգամ գալստեանդ: Եւ ջնջեմ՝ զգիր պարտուց յանցանացնոցա, և Քեզ փառք յամենայն երկրածին հողեղինացս այժմ և յաւիտեանս յաւիտենից ամէն, Տէր Յիսուս Քրիստոս ողորմեա աշխատաւղի սորա և պատուական գրչի Յակոբոս վարդապետի և ծնողաց իւրոց ամէն. եղևա յիշեսցի ի Տէր»:

Չորրորդ հինգ ձեռագիրք. Աւետարան, կաշեկաղմ, երկասիւն, մեծութիւնը  $55 \times 66$  հրմ. երկաթագրով, ընտիր մագաղաթի վրայ գրած, 319 թերթից բաղկացած. ունի չորս նկար, լուսանցաղարդեր, զարդագրեր և տասն խորաններ: Խորաններէ տուաջին երկուսը կիսաբոլորակ խաչաձև են, իսկ միւսները ուղորական ձևով. թուրն էլ ոսկենկար խառնուած կապտաւուն

և գորշագոյն գոյներով: Առաջին երկուսում՝ զետեղուած է թուղթ եւսեբի Կարպիանոսի. մի քանիսն աւետարանացոյց առաքաւաններ են: Պակասում է շնացող կնոջ աւետարանը: Նկարներն ամբողջ ոսկուց են:

Յիւստակարան.

«Փառք . . . . արդ զայս քան կենսացուցիչ և բազում բացեալք առ լցեալ, և նորոգ ամուր յուսալիւր կաթողին ողուով և խանդակաթ սիրով բանս լուեալ և ուսեալ երանելիս այս պատուեալ աւժութեամբ քահանայական շնորհիւ Ստեփաննոս վերակարդացեալ անուն սպասաւոր բանի բանին աստուծոյ, և բացալ յայտող խորհրդոց նորա: Աս որպէս հուր բորբոքեալ ի սիրոյ անտի սր ի սուրբսն խնդրեաց կցորդել նոցին պսակացն և մեծաւ աշխատութեամբ ջանաց ստանալ զկենսարար սուրբ Աւետարանն. . . . : Արդ եղև սկիզբն գրչութեան սորա ի թուաբերութեանս Հայկազնեան ազգիս ՈԿԻ ի Հայրապետութեան Տեառն Յոհաննիսի որդւոյ Կոստանդայ և ի թագաւորութեան աստուածապսակ արքայիս հայոց մեծաց Լևոնի որդւոյ Ստեփանէի որդւոյ Լևոնի որդւոյ Կոստանդեայ, Յառովբինանց և ճշմարիտ և հաւատարիմ ծառայից աստուած և յուղղափառ դաւանողաց զհամագոյ Սուրբ Երրորդութեան ձեռամբ Գրիգորի մեծահոգեակ գրչի ի սուրբ ուխտին Սկիւռայ կոչեցեալ. զոր և հասեալ ի վերջ սորա ոչ կարաց կատարել զի հասարակաց ընութիւնս զիւրն պահանջեաց, մեռաւ ի բարւոք ծերութեան զոր և Տէր Յիսուս հանգուոցէ զնա ընդ Սուրբս իւր: Իսկ սա մնացեալ թերակատար ի տարակուսանս ընկեց զյառաջ ասացեալ ստաւցողս սորա, իսկ իմ տեռեալ զնա յայնպիսի տարակուսանս կամեցայ ընուլ զպակասն և առեալ՝ թէպէտ և ոչ կատարեալ յարհեստս սակայն ապաւինեալ յԱստուած և յազաւթս. . . . ձեռս եղեալ կատարեցի զսա. . . . և ի բարեխաւսութիւն հոգւոյ ստաւցողի սորա: Եղև կատարումս սորա ի թուին ՍԿԵ ի քաղաքիս Տարսոն, ընդ հովանեաւ Սուրբ Նախավկային Ստեփաննոսի»:

Մատենադարանապետ՝ Ս. Ա. Ֆնաւիրկչեան

Մատենադարանի

Գարեգին Բեկ. Կիրակոսեան.